ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հուլիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

108
(2774)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱԳՆ՝ ԱՌԱՆՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը վերջին երկու տարվա ընթացքում դրամաշնորհային ծրագրով ՀՀ դիվանագիտական դպրոցին հատկացրել է 449 մլն 098 հազար դրամ: Մինչ այդ որեւէ հատկացում չկա, համենայնդեպս պետական գնումների մասին առցանց հարթակում այդ մասին ոչինչ նշված չէ:

Տեղեկացնեք, որ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը կամ Հայաստանի դիվանագիտական դպրոցը հիմնվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2009 թվականի սեպտեմբերին: Դպրոցի առաջնային նպատակներն են Արտաքին գործերի նախարարության համակարգի համար դիվանագիտական կադրերի պատրաստումը:

Արդեն 14 տարի է, ինչ գործում է դիվանագիտական դպրոցը: Այս ընթացքում հայաստանյան դիվանագիտությունը որեւէ շոշափելի արդյունք չի ունեցել: Այն ժամանակահատվածում, երբ Հայաստանը պատերազմական գործողությունների թատերաբեմում էր, դիվանագիտական լուրջ հարաբերություններ ծավալելու փոխարեն, փրփուրներից էր կախվում իշխանությունը: Այն ժամանակ, երբ ճիշտ դիվանագիտական քայլերն ամենաանհրաժեշտն էին Հայաստանի համար, մենք չտեսանք 10 տարուց ավել գործող կառույցի «արտադրած ռեսուրսները»: Հայաստանի եղած եւ արդեն քայքայված դիվանագիտության ներկայացուցիչները իշխանական դրածոներն են, ովքեր անցյալում նույնիսկ որեւէ կապ չեն ունեցել դիվանագիտական բանակցությունների հետ:

Օրինակ՝ ԱԳՆ նախարար Արարատ Միրզոյանը, նրա տեղակալ Վահե Գրիգորյանը, Մնացական Սաֆարյանը, Պարույր Հովհաննիսյանը, Վահան Կոստանյանը, Ամերիկայում դիվանագիտական ծառայություն կատարող Լիլիթ Մակունցը, Իսպանիայում՝ Սոս Ավետիսյանը, Գերմանիայում Վիկտոր Ենգիբարյանը ներկայացնում են Հայաստանը, սակայն չունեն դիվանագիտական կրթություն: Մինչդեռ, համակարգում ներկայացուցիչների մեծ մասի աստիճանը արտակարգ եւ լիազոր դեսպան է, սակայն նրանք ոչ մի կապ չունեն դիվանագիտության հետ՝ ո՛չ կրթություն ունեն, ո՛չ մասնագիտացում:

Ո՞ւր է այն ռեսուրսը, որը պետք է օգտագործվեր Հայաստան-Թուրքիա բանակցությունների համար, եւ ինչո՞ւ պիտի Հայաստանի անունից թուրք դեսպան Սերդար Քըլըչի հետ հանդիպմանը հայաստանյան ներկայացուցիչը լիներ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը, որը դիվանագիտություն բառի հետ անգամ կապ չունի:

Այսպիսով, ինչի՞ համար է այն կառույցը, որը նպատակին չի ծառայում, ինչի՞ համար են ՀՀ պետական բյուջեից ներկայիս իշխանությունների օրոք միլիոնավոր ներդրումներ արվում, որոնք անարդյունք են մնում, եւ վերջապես ինչի՞ համար է դեռ կանգուն այն կառույցը, որն իր առաջնային նպատակը չի իրականացնում: Դիվանագիտությունը չի լուծում ո՛չ Հայաստաի, ո՛չ Արցախի առջեւ ծառացած լրջագույն մարտահրավերները, եւ շարունակ կրակոցն է իր «գործն անում»:



Չնայած որ ամառային հանգստի շրջան է, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում այս օրերը բուռն աշխատանքային են: Նաեւ վերանորոգումների փուլում են իշխանությունները՝ պայմանավորված աշնանը սպասվող ավագանու ընտրություններով: Այս պահին վերանորոգվում է ՔՊ նախընտրական գլխավոր շտաբը, որը գտնվում է Հյուսիսային պողոտայում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ շտաբը օգոստոսի սկզբից արդեն պաշտոնապես կգործի: Գլխավոր շտաբը պատրաստ լինելուց հետո արդեն ամեն վարչական շրջանում շտաբներ կբացվեն, եւ կսկսվի բուն քարոզարշավը: Թեեւ խորհրդարանն ավարտել է իր աշխատանքները, բայց ՔՊ-ական պատգամավորները ամեն շաբաթ վարչության եւ նախաձեռնող խմբի նիստեր են անում, հանդիպումներ կազմակերպում, որի ընթացքում Նիկոլ Փաշինյանի ու իրենց քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի հետ քննարկում են ավագանու ընտրությունների հետ կապված հարցերը: Այս ընթացքում ՔՊ-ականների համար օրակարգային է նաեւ ՔՊ նախընտրական շտաբի ղեկավարի՝ Արմեն Փամբուխչյանի տեղակալների հարցը, բայց այդ մասով դեռ վերջնական որոշում չունեն: Բացի սա, այս ընթացքում վերանորոգվում է նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակը, որը Սայաթ-Նովա պողոտայից տեղափոխվելու է Հանրապետության փողոց՝ Հանրապետական եւ «Դաշնակցություն» կուսակցությունների հարեւանությամբ: Կարճ ասած, ՔՊ-ն խրոխտ քայլերով գնում է նախկինների ճանապարհով:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը, որ քաղհասարակությունից է խորհրդարան մտել, իր կարողություններն է մեծացնում: Պատգամավորը հեղափոխությունից հետո՝ 2019 թվականին, բնակարան եւ ավտոկայանատեղի է գնել: Երկուսն էլ գնվել են նույն օրում՝ մարտի 20-ին, Արաբկիր վարչական շրջանում: Նկատենք, որ մեկ տարվա ընթացքում պատգամավորը վաստակել է 10 մլն դրամից ավելի գումար, որից 90 հազարը «Ժուռնալիստների ասպարեզ» ակումբից է ստացել, 24 հազարը՝ «Կանանց իրավունքների տուն» կազմակերպությունից, իսկ մնացածն էլ նրա աշխատավարձն է: Թե ինչի դիմաց է դրամաշնորհներով աշխատող այդ կազմակերպություններից գումար ստացել Տիգրանյանը, հայտարարագրում չի երեւում: «Թրանսփերփինսի ինտերնեշնլ» հակակոռուպցիոն կազմակերպության նախկին աշխատակիցը շատ բաներ փակել է հայտարարագրում: Բանն այն է, որ, «Պատգամավորի երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համաձայն, պատգամավորը կարող է միայն գիտամանկավարժական գործունեություն ծավալել: Թե այս ՀԿ-ները ինչ կապ ունեն գիտամանկավարժության հետ, ինչի դիմաց են վճարել Տիգրանյանին, դա էլ չի երեւում հայտարարագրում: Կարծում ենք՝ այստեղ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն անելիք ունի: Հավելենք, որ ՔՊ-ական պատգամավորը նաեւ վարկ ունի, որը հիփոթեք է՝ բնակարան ձեռք բերելու համար: Հիփոթեքի գումարը տարվա վերջում կազմել է 22 մլն 212 հազար դրամ, սակայն վարկի մարման ծախսերի վերաբերյալ նախկինում թափանցիկության մասին զեկույցներ ներկայացնող Տիգրանյանի հայտարարագրում տեղեկություններ չկան՝ որքան է մարել, ինչ միջոցներից:

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում քննարկվում էր ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի միջնորդությունը՝ ԱԺ քննիչ հանձնաժողով ներկայանալու մասին: «Ժողովուրդ» օրաթերթին այդ դռնփակ նիստից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, պարզեցինք, որ միջնորդությունը անձամբ դատարանում ներկայացրել է ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը եւ պահանջել, որ իրեն առանց ձեռնաշղթաների կամ ԱԱԾ ուղեկցող խմբի դատարանը թույլ տա ԱԱԾ մեկուսարանից դուրս գալ եւ գնալ Ազգային ժողով, ինչը սովորաբար կիրառվում է կարճատեւ այցերի ժամանակ: Դատավոր Վահե Դոլմազյանը նմանօրինակ դեպքերի համար ասել է, թե կալանավորին ԱԺ քննիչ հանձնաժողով ինչ կարգով պետք է թույլ տալ ներկայանալու. համապատասխան ընթացակարգ չկա: Բայց, չնայած դրան, այսօր Հակակոռուպցիոն դատարանը կիրապարակի նախկին նախարարին ԱԺ մտնելու թույլտվություն շնորհելու մասին որոշումը: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Հակակոռուպցիոն դատարանը, ամենայն հավանականությամբ, թույլ կտա ՀՀ նախկին ՊՆ Դավիթ Տոնոյանին ԱԱԾ մեկուսարանից գնալ ԱԺ քննիչ հանձնաժողով եւ իր տեսածն ու լսածը հայտնել քննիչ հանձնաժողովին: Բանն այն է, որ քաղաքական իշխանությունները բացատրել են դատարանին, որ քննիչ հանձնաժողովում քննվում է պետության համար կարեւորագույն հարց, ու թեեւ նախադեպ չկա, ամեն դեպքում, Դավիթ Տոնոյանի ցանկացած խոսքը կարող է լինել նոր քննության առարկա, եւ նրա ներկայանալը հանձնաժողով խիստ անհրաժեշտ է:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

Ի՞ՆՉ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻՑ

Երեկ՝ ժամը 20:00-ին, տեղի ունեցան համաժամանակյա հանրահավաքներ Ստեփանակերտի Վերածննդի եւ Երեւանի Ազատության հրապարակներում:

Համաժողովրդական շարժման մասնակիցները մեծ էկրաններով օնլայն ռեժիմով կամրջեցին երկու հրապարակները՝ միավորելու բոլորիս ձայները եւ վերահաստատելու մեր միասնական պայքարը:

Հանրահավաքի ժամանակ պահանջներ ներկայացվեցին Հայաստանի իշխանություններին եւ միջազգային հանրությանը:

Մինչ հանրահավաքը «Ժողովուրդ» օրաթերթն այս մասին զրուցել է Սոֆիա Հովսեփյանի հետ՝ պարզելու համար, թե ինչ սպասելիքներ ունեն հանրահավաքից:

-Տիկի՛ն Հովսեփյան, Դուք մասնակցելու՞ եք հանրահավաքին, եւ եթե այո, ի՞նչ ակնկալիքներ, սպասելիքներ ունեք դրանից:

-Ես, իհարկե, մասնակցելու եմ այսօրվա հանրահավաքին եւ ակնկալում եմ, որ վերջապես պետք է Արցախի կառավորությունը կոնկրետ պահանջներ ներկայացնի Հայաստանի կառավարությանը եւ ոչ թե դա ակնկալի աշխարհից: Վերջնարդյունքում, նախ, Հայաստանի իշխանությունը պետք է պատասխանատվություն կրի Արցախի այսօրվա կարգավիճակի համար, որից հետո աշխարհից որեւէ ակնկալիք ունենա, որ անընդհատ ապտակ չուտենք, որ մեր իշխանությունը ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

-Հանրահավաքի ընթացում կոնկրետ ի՞նչ պահանջներ են ներկայացվելու Նիկոլ Փաշինյանին եւ միջազգային դերակատարներին:

-Հույս ունեմ, որ այսօր քաղաքական պահանջներ կներկայացվեն, եւ միեւնույն ժամանակ մարդիկ համախմբված կմասնակցեն հարահավաքին:

Ես տեղեկություն չունեմ, թե կենկրետ ինչ է նախատեսվում պահանջել Նիկոլ Փաշինյանից, բայց կարծում եմ, որ պահանջը մեկն է՝ որ որեւէ կերպ իրեն իրավունք չվերապահի Արցախի եւ Հայաստանի ժողովրդի փոխարեն որոշել Արցախի ճակատագիրը: Եվ, առհասարակ, Փաշինյանը լեգիտիմ չի համարվում նմանատիպ հարցեր կարգավորելու առումով: Փաստացի նա հանձնում է ամբողջ Հայաստանը եւ միեւնույն ժամանակ Արցախը: Նա չի կարող անգամ պահանջել Նոյեմբերի 9-ի պայմանագրի կետերի կատարումը, հակառակը՝ նորից նոր պայմանագրեր ու հայտարարություններ է ստորագրում, որոնք չարիք են դառնալու հայ ժողովրդի համար:

-Տիկի՛ն Հովսեփյան, ի՞նչ եք կարծում, նման հանրահավաքներով հնարավո՞ր է հասնել ցանկալի արդյունքի:

-Կարծում եմ, որ նման հանրահավաքները կտան իրենց ցանկալի արդյունքը, եւ պետք է համախմբվել, ուժ դառնալ եւ միանշանակ լուծել այս խնդիրը: Ցանկալի արդյունքը վերջնական լուծումն է, եւ դա կարող է լինել բացառապես համախմբման դեպքում:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՇՐՋԱՆՑԵՑ

ԿՄԻՋԱՄՏԻ՞ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՊՔՈՒՄ

«Ես չեմ ցանկանում նման սցենար ընդհանրապես քննարկել, որովհետեւ իմ կարծիքն այն է, որ Լեռնային Ղարաբաղում պետք է ռազմական գործողություններ չսկսվեն»,- մամուլի ասուլիսին ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով հարցին, թե եթե Լեռնային Ղարաբաղում ծավալուն ռազմական գործողություններ սկսվեն, որն է լինելու ՀՀ-ի գործողությունը, արդյոք մենք ռազմական միջամտություն կցուցաբերենք, թե կսահմանափակվենք դիվանագիտական աշխատանքով՝ հաշվի առնելով, որ, վարչապետի խոսքով, «քանի դեռ խաղաղության պայմանագիր չկա, պատերազմի հավանականությունը շատ մեծ է»:



«Իմ այսօրվա ասելիքի հիմնական ուղերձը դա էր: Դուք մեջբերում եք իմ ասածից, որ քանի դեռ խաղաղության պայմանագիր չկա, պատերազմի հավանականությունը շատ մեծ է... Սա փիքսենք, եւ, մյուս կողմից, հարցը, որ կա շարժում, որ ՀՀ վարչապետին արգելենք խաղաղության պայմանագիր ստորագրի: Այս երկու հասկացությունների բալանսն էլ եմ ուզում, որ հասկանանք: Բայց, ընդհանուր առմամբ, եղել են դեպքեր, չեմ ուզում շատ վատ օրինակներ բերել, հազար ներողություն՝ ոչ մի կոնկրետ զուգահեռ ի նկատի չունենալով: Մեր ամենամեծ մտահոգությունն այն է, որ մենք ստորագրենք խաղաղության այնպիսի պայմանագիր, որը կապահովի խաղաղություն կամ ապահովելու հնարավորինս մեծ շանսեր ունենա: Հակառակ դեպքում վաղուց ստորագրել էինք խաղաղության պայմանագիրը՝ առանց նրբությունների մեջ խորանալու, թե որքանով է ապահովվում խաղաղությունը: Եթե նույնիսկ այդ խաղաղության պայմանագիրը պայմաններ է ստեղծելու, որ մեկ կամ երկու տարի խաղաղություն լինի, դա էլ ճիշտ տարբերակ չի: Չնայած, մյուս կողմից, պետք է հետեւյալն արձանագրել. ոչ միայն հենց բուն խաղաղության պայմանագրի ստորագրումը, այլեւ դրա իրականացումը, դրա իրականացման մեխանիզմները եւ... ցանկացած պայմանագիր ունենում է տարընթերցումներ, տարընթերցումների հասցեագրման հստակ մեխանիզմների գոյությունը, այդ դեպքում կապահովի խաղաղությունը: Եւ, ի վերջո, նույնիսկ այդ պարագայում կարող է չապահովվել խաղաղություն: Որովհետեւ եթե կողմերից մեկն անընդհատ խոսում է ագրեսիվ տոնայնությամբ, ատելության քարոզ է տանում, դա էլ խաղաղությանը նպաստող գործոն չէ, որովհետեւ այդ ատելության մթնոլորտում այդ խաղաղության պայմանագիրը կարող է չգործել: Իմ այսօրվա ասելիքի նրբությունը ո՞րն է. որ ոչ միայն սա փիքսենք, այլեւ փորձենք հասկանալ, թե ինչ կարող ենք անել այդ հարցերը լուծելու համար: Ոչ թե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ, մեկ է, ոչինչ չի ստացվի, եկե՛ք ոչ մի բան չանենք, այլ մաքսիմալը անենք եւ հավատանք, որ կարող ենք այդ արդյունքին հասնել, որ այդ աշխատանքն անիմաստ չլինի, եւ, այսպես ասած, խորհրդավոր չլինի, դավադրական չլինի: Խաղաղության պայմանագրի բացակայությունը կրկնապատկում է պատերազմի հավանականությունը»,- ասաց Փաշինյանը:

ԹՈՐՈՍՅԱՆԸ ԱՇԽԱՏԱՆՔ Է ՓՆՏՐՈՒՄ

Բազմիցս գրվել է, որ նախկին նախարար Արսեն Թորոսյանի ու թիմակիցների շփումները դարձել են խիստ ձեւական եւ սառը: Շատերը նույնիսկ խուսափում են աշխատանքային կապեր պահպանել վերջինիս հետ՝ վախենալով, որ այն կարող է վատ հետեւանքներ ունենալ իրենց համար: Իշխանության վերին էշելոններում համառորեն լուրեր են պտտվում, որ առկա են որոշակի տեղեկություններ, համաձայն որոնց՝ Թորոսյանի՝ նախարար աշխատած ժամանակ, ամենայն հավանականությամբ, ծovid 19-ի ֆինանսական հոսքերից բավական պատկառելի գումար է մխվել, ապա դրա զգալի մասը դուրս է բերվել երկրից՝ ներդրվելով առողջապահական բիզնեսում: Մեզ փոխանցեցին, որ Թորոսյանի նախկին տեղակալի՝ Գեւորգ Սիմոնյանի կալանավորումը եւ Քովիդի գործով ուժայինների ակտիվությունը հենց այս գործի շրջանակներում էր: Թե որքանով են տվյալ լուրերը հավաստի, ու թե ինչքանով է Թորոսյանն ուղղակի կամ անուղղակի առնչվում այս ամենին, դժվար է ասել: Արսեն Թորոսյանի հետ ժամանակին մտերմիկ հարաբերություններ ունեցած անձանցից մեկը մեզ փոխանցեց, որ նրա երազանքն է լքել երկիրը ու աշխատանքի անցնել Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում: Ըստ նույն աղբյուրի՝ Թորոսյանը հիմա ամեն ինչ անում է, որ դուր գա ԱՀԿ-ի բարձր ղեկավարությանը, նույնիսկ իր քայլերը տարբեր ճանապարհներով փորձում է հասցնել ԱՀԿ գլխադասային գրասենյակ. չի բացառվում, որ նրա քայլերը նույնիսկ ուղղորդված են դրսից: Ըստ այդմ ստացվում է, որ, հանուն սեփական կարիերայի կամ սեփական անվտանգության ապահովման, Թորոսյանը կարող է անել քայլեր, որոնք չեն բխում ՀՀ շահերից: Իսկ թե որտեղ կհայտնվի Թորոսյանը եւ երբ, ցույց կտա ժամանակը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար փորձեց կապ հաստատել Արսեն Թորոսյանի հետ, սակայն մեր բազմաթիվ զանգերն այդպես էլ անպատասխան մնացին:

Ո՞ՒՐ Է ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը վերջին շրջանում ամեն պատեհ-անպատեհ առիթի դեպքում նույն վտանգավոր հայտարարությունն է անում, թե Հայաստանը պատրաստ է ճանաչել Ադրբեջանի 86.600 ք/կմ տարածքը, որը ներառում է Լեռնային Ղարաբաղը: Միրզոյանն առաջին անգամ նման հայտարարություն է արել հուլիսի 20-ին՝ ԵԱՀԿ հատուկ մշտական խորհրդի նիստի ժամանակ, հետո կրկնել է իր այս հայտարարությունը: Ի դեպ, Արարատ Միրզոյանը նման հայտարարություն է անում ողջ հայ հանրության անունից՝ չնայած նրան, որ Հայաստանի քաղաքացիները բազմիցս հստակ արտահայտել են իրենց դիրքորոշումը, որ որեւէ դեպքում չեն պատկերացնում Արցախն Ադրբեջանի կազմում: Այս ֆոնին թերեւս տարօրինակ է Արցախի արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանի քար լռությունը, որը ոչ մի կերպ չի փորձում արձագանքել Արարատ Միրզոյանի վտանգավոր հայտարարություններին: Անհասկանալի է, թե Արցախի համար այս բախտորոշ փուլում ուր է կորել ու ինչու է լռում ամենակարեւոր կառույցներից մեկի պատասխանատուն՝ արտգործնախարարը. տպավորություն է՝ անհետացել է նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



2022 թվականի դեկտեմբերի 12-ից Արցախի Հանրապետության հանդեպ Ադրբեջանն իրականացնում է նոր հանցագործություն՝ շրջափակելով Արցախը: Վերջին մեկ ամսում նույնիսկ հումանիտար բեռների փոխադրման ամբողջական արգելքը, գազամատակարարման ու էլեկտրամատակարարման շարունակական խափանումները, պարբերական ռազմական ագրեսիաներն ու սադրանքները, հոգեբանական ահաբեկչությունը նպատակ ունեն ճնշել եւ կոտրել Արցախի ժողովրդի ազատ կամքն ու ինքնորոշման իրավունքը, բռնի կերպով հպատակեցնել նրան եւ, ի վերջո, հանգեցնել էթնիկ զտման: Այս մասին հայտարարություն է տարածել «Արցախ» ՀԿ-ն:

Հայտարարությունում նաեւ ասվում է. «Հարկ ենք համարում նշել, որ Արցախի Հանրապետության ներկայիս իրավաքաղաքական կարգավիճակը ձեւավորվել է համաժողովրդական կամքի արտահայտությամբ՝երեք հանրաքվեների, դրանց արդյունքում ընդունված Սահմանադրությամբ եւ պետական իշխանությունների կայացման ճանապարհով: Արցախի պետականությունը եւ պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու արցախցիների իրավունքը բացարձակ արժեքներ են, որոնցից անգամ պատերազմի սպառնալիքը չի կարող արցախցիներին հետ պահել:

Պահանջում ենք Հայաստանի Հանրապետության իշխանություններից հրաժարվել աղետալի դիրքորոշումից եւ առաջնորդվել բացառապես նշված արժեքներով: Ոչ մի իշխանություն իրավունք չունի «խաղաղության» իմիտացիայով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես նաեւ միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային սկզբունքի նշաձողն իջեցնել: ՀՀ իշխանությունները պարտավոր են առաջնորդվել Անկախության հռչակագրով, ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշումով:

Հարգելի՛ հայրենակիցներ, Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման եւ Արցախի Հանրապետության կայացման սուրբ գործի համար կոչով դիմում ենք Ձեզ՝ միացե՛ք «Հայաքվե» նախաձեռնությանը, դարձե՛ք նրա շարժիչ ուժը, ակտիվ մասնակցե՛ք եւ մասնակից դարձրե՛ք ստորագրահավաքին Ձեր շրջապատի հայրենասեր մարդկանց, քանի որ այն համահայկական նախագիծ է՝ առանց որեւէ սահմանափակման կամ կուսակցական պատկանելության:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

ԴԻՄՈՒՄ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Հուլիսի 24-ին քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպություններ կոչով դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշին՝ պահանջելով շտապ քայլեր ձեռնարկել՝ Լեռնային Ղարաբաղում Լաչինի միջանցքի ամբողջական շրջափակման արդյունքում մարդու իրավունքների շուրջ ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված:

Հակամարտության կայուն եւ խաղաղ կարգավորման գործում տարբեր միջազգային դերակատարների օժանդակությամբ ընթացող քաղաքական բանակցությունների կարեւորությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ անթերագնահատելի է: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղում ապրող ժողովրդի համար սովից եւ հումանիտար աղետից մահանալու անմիջական սպառնալիքը իրավիճակը դարձնում է սարսափելի: Հետեւաբար հրատապ է այս մարդասիրական աղետը կանխելու համար միջազգային արագ եւ վճռական արձագանքը:

215 օրից ավելի պաշարման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղի տեղաբնիկ հայերի իրավունքները համակարգված խախտվում են, որպեսզի ստեղծվեն անտանելի պայմաններ, ու Ադրբեջանի կողմից ակնհայտ էթնիկ զտումների դրդապատճառներով դուրս մղեն իրենց այդ տարածքից: Մեկը մյուսով պայմանավորված՝ խախտումների հետեւանքներն ուժգնանում են եւ ներառում են ներքոնշյալները.

• մարդկանց եւ տրասպորտային միջոցների տեղաշարժի ազատությունը, որը բացառությամբ քչաթիվ արտակարգ դեպքերի, ամբողջությամբ արգելված է Լեռնային Ղարաբաղից եւ դեպի Լեռնային Ղարաբաղ, այդ թվում նաեւ խաթարել է հանրային տրանսորտի եւ մասնավոր փոխադրամիջոցների տեղաշարժը վառելիքի պակասի պատճառով:

• Սննդի եւ ջրի հասանելիությունը, քանի որ գյուղացիները չեն կարողանում մշակել իրենց հողատարածքները եւ կերակրել իրենց անասուններին՝ հաշվի առնելով ադրբեջանցի զինվորականների հաճախակի կրակոցները, որոնք նաեւ վնասում են գյուղտեխնիկան եւ գողանում անասունները: Սարսանգի ջրամբարը չորանում է եւ ապահովում մարդկանց գոյատեւման համար անհարժեշտ էլեկտրաէներգիան;

• Բնապահպանական իրավունքները, որոնք պայմանավորված են դեգրադացվող Սարսանգի ջրամբարից շրջակայքի ուտելի բույսերի, ձկնային ռեսուրսների եւ ոռոգելի հողերի կախվածությամբ:

• Ֆիզիկական առողջության իրավունքը՝ հաշվի առնելով թերսնումը, դեղորայքի, հիգիենայի պարագաների, հագուստի եւ բժշկական ծառայությունների հասանելիության պակասը՝ պայմանավորված այս շրջանում ավելի քան 1400 ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդների անհետաձգելի վիրահատության չեղարկմամբ եւ ԿԽՄԿ-ի կողմից պատշաճ բուժօգնություն ստանալու նպատակով միայն մի քանի հիվանդի Հայաստան տեղափոխմամբ, բարձր սթրեսի ու շրջափակման պայմաններում հավասարակշռված սննդակարգի հնարավորությունից զրկված հղի կանանց շրջանում վաղ հղիության փուլում միայն անցած ամսվա ընթացքում գրանցված եռապակտված վիժումների թիվը:

• Տնտեսական եւ սոցիալական իրավունքները՝ անհրաժեշտ ապրանքների ներկրման անհնարինությամբ, էլեկտրաէներգիայի եւ գազի սակավությամբ պայմանավորված, 860 տնտեսավարող սուբյեկտների գործունեության դադարեցմամբ եւ դրա արդյունքում շուրջ 11000 մարդու գործազրկությամբ ու եկամտի կորուստով, ինչպես նաեւ գյուղացիների կողմից հավաքված բերքը քաղաք տեղափոխելու անկարողությամբ:

• Հոգեկան առողջության իրավունքը՝ Ադրբեջանի ղեկավարության մշտական ռազմատենչ սպառնալիքների զուգակցումը շրջափակման եւ սովամահության միջոցով մարդկանց կամքը կոտրելու փորձով, աշխատանքի հնարավորությունների բացակայությամբ, տնտեսական եւ սոցիալական անգործությամբ, անապահով եւ անորոշ վիճակով, ինչպես նաեւ պահվող եւ շարունակաբար խոշտանգվող 35 գերիների, այդ թվում՝ քաղաքացիական անձանց միջոցով ադրբեջանական զինուժի կողմից հայերի նկատմամբ գործադրվող ահաբեկչությամբ պայմանավորված:

Վերոնշյալները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կենցաղը խաթարելուն, կյանքի անտանելի պայմաններից դրդված հայրենիքը լքելուն հակող Ադրբեջանի ռազմավարության մասն են կազմում, որն ի վերջո էթնիկ զտումների վարվող քաղաքականություն է:

Նկատի ունենալով նման աղետները կանխելու ՄԱԿ-ի ավելի համընդգրկուն մանդատն ու պատասխանատվությունը՝ կազմակերպությունները շտապ քայլեր ձեռնարկելու կոչ են անում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Կազմակերպությունները հորդորում են՝

• կոչով դիմել Ադրբեջանին արդյունավետ եւ տեսանելի քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար Արդարադատության միջազգային դատարանի կողմից 2022 թվականի դեմտեբերի եւ 2023 թվականի փետրվարի որոշումների անհապաղ կատարումը,

• դիտարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության գծով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի նշանակման հարցը՝հաշվի առնելով հումանիտար աղետը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՆ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը 2023 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագիրով գնել է 450 հատ ձեռնաշղթա՝ 6 մլն 750 հազար դրամ արժողությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ ՊՆ-ից տեղեկացավ, որ այս գնումները «Ռազմական ոստիկանության եւ պարետային ծառայության կարիքների համար» է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Իտալիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը «Լեւոնյան» վարժարանում հանդիպել է Հռոմի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում Խաչատուրյանն անդրադարձել է Հայաստանի ներքին ու արտաքին ընդհանուր իրադրությանը, տարածաշրջանային հիմնախնդիրներին եւ դրանց լուծման ուղղությամբ հայաստանյան իշխանությունների որդեգրած սկզբունքներին:

Նախագահն ընդգծել է, որ ներկայումս Հայաստանն ունի հստակ դիրքորոշում մեր տարածաշրջանում խաղաղության հասնելու եւ հարեւանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հարցերի շուրջ:

Հանրապետության նախագահը նաեւ անդրադարձել է վերջին տարիներին երկրի ներքին կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ տնտեսական կյանքում իրականացվող բարեփոխումներին: Վահագն Խաչատուրյանը շեշտել է, որ ներկայիս կառավարությունը առաջնորդվում է հայաստանյան տնտեսական միջավայրը ներդրումների համար առավել ճկուն ու գրավիչ դարձնելու սկզբունքներով եւ այս նպատակի համար անհրաժեշտ քայլեր է իրականացնում:

Համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման շրջանակներում հանրապետության նախագահը Երախտագիտության մեդալով է պարգեւատրել Լետիցիա Լեոնարդիին եւ Թալալ Խրահսին՝ Հայաստանին եւ հայ ժողովրդին մատուցած ծառայությունների համար:

ՓԼՈՒԶՎԱԾ ԿԱՄՈՒՐՋԸ ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԻ

Նոր կամուրջ է կառուցվում Մ3 միջպետական ճանապարհին՝ Լուսագյուղի տարածքում: Նախկինը փլուզվել էր գերբեռնված մեքենաների պատճառով, նորոգման ենթակա չէր: Այս կամուրջը 15 գյուղերի բնակիչների միակ ճանապարհն է:

Կառավարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ 133 միլիոն դրամ է կառավարությունը հատկացրել շինարարության համար:

ՓԱԽՈՒՍՏԻ ՓՈՐՁ

ՀԱՅՀՈՅԱՆՔ, ՔԱՇՔԾՈՒԿ ՈՒ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արման Մարգսի Կոստանյանին մեղադրանք է առաջադրվել.

Վերջինս, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում 2023 թվականի հունիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված թիվ 26142923 քրեական վարույթով հանդիսանալով ձերբակալված անձ եւ գտնվելով ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ձերբակալվածների պահման վայրի թիվ 4 խցում, 2023թ հունիսի 8-ին՝ ժամը 07:20-ի սահմաններում, կատարել է խուլիգանություն, հասարակության, այն է՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի բաժնի օպերատիվ հերթապահ Էդգար Կամոյի Մկրտչյանի, հերթապահի օգնական Էդգար Տիգրանի Սարգսյանի եւ ձերբակալվածների պահման վայրում տվյալ օրը ծառայություն իրականացնող ոստիկան Արման Սեթի Ստեփանյանի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք, որը դրսեւորվել է իր կողմից թիվ 4 խցի դռանը ոտքով պարբերաբար հարվածելիս ինչպես իրեն կարգի հրավիրող նշված ոստիկանության աշխատակիցներին ուղղված, այնպես էլ շուրջ 30 րոպե տեւողությամբ անհասցե սեռական բնույթի հայհոյանքներով, ոտքի բազմաթիվ հարվածներով ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ձերբակալվածների պահման վայրի թիվ 4 խցի դռան փականը եւ դռան շրջանակի՝ փականին հարող հատվածները վնասելով, նաեւ ռազմականացված կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի բնականոն աշխատանքը խոչնդոտելով, որպիսի պայմաններում ՀՀ ոստիկանության Արարատի բաժնում ստեղծվել է լարված իրավիճակ, եւ օպերատիվ հերթապահ Էդգար Մկրտչյանը, հերթապահի օգնական Էդգար Սարգսյանը չեն կարողացել պատշաճ կերպով իրականացնել իրենց ծառայությունը՝ պատասխանել ոստիկանության բաժնի հերթապահ մաս զանգահարած քաղաքացիների հեռախոսազանգերին, կատարել իրենց վերապահված այլ գործառույթներ:

Արման Կոստանյանը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում 2023 թվականի հունիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված թիվ 26142923 քրեական վարույթով հանդիսանալով ձերբակալված անձ եւ գտնվելով ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ձերբակալվածների պահման վայրի թիվ 4 խցում, 2023թ. հունիսի 8-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, խնդրել է շտապ բուժօգնություն՝ պատճառաբանելով, որ իրեն վատ է զգում: ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի աշխատակիցների կողմից կանչով ժամանած՝ «Վեդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապօգնության աշխատակիցներն Արման Կոստանյանին ոստիկանության Արարատի բաժնի ձերբակալվածների պահման վայրի բուժսենյակում զննելուց եւ համապատասխան բուժօգնություն ցուցաբերելուց հետո՝ ժամը 09:25-ի սահմաններում, հեռացել են, որից անմիջապես հետո Արման Կոստանյանը, դեռեւս գտնվելով բուժսենյակում, փախուստի դիմելու նպատակով աջ ոտքով հարվածել է դռանը, բացել այն ու կտրուկ վազել է հերթապահ մաս, սակայն այդ պահին այնտեղ գտնվող ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի օպերատիվ հերթապահի օգնական Կարեն Արթուրի Դավիդյանը եւ ձերբակալվածների պահման վայրի ոստիկան Նարեկ Սուրենի Աբրահամյանը բռնել են Արման Կոստանյանի ձեռքերից եւ թույլ չեն տվել առաջ շարժվել: Արման Կոստանյանին հաջողվել է մի քանի քայլ առաջանալ դեպի հերթապահ մասի մուտքի դռան կողմը, որի ժամանակ վերջինս բղավել ու պահանջել է իրեն բաց թողնել: Նույն պահին ոստիկանության աշխատակիցներ Կարեն Դավիդյանին եւ Նարեկ Աբրահամյանին օգնության է եկել ոստիկանության Արարատի բաժնի վարորդ Մարտիկ Հակոբի Ղարիբյանը, որը փորձել է թույլ չտալ, որպեսզի Արման Կոստանյանը դուրս գա հերթապահ մասից, սակայն վերջինս իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին հասցնելու նպատակով, բռնություն գործադրելով Մարտիկ Ղարիբյանի նկատմամբ, նրան քաշքշել եւ հրմշտել է, ինչի հետեւանքով Մարտիկ Ղարիբյանը դիպել է դեպի ձերբակալվածների պահման վայր տանող մետաղյա դռանը, եւ նրա առողջությանը պատճառվել են թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ ձախ նախաբազկի միջին երրորդականի հետին-դրսային մակերեսի փափուկ հյուսվածքների սալջարդի եւ քերծվածքների ձեւով: ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի աշխատակիցներ Կարեն Դավիդյանի, Նարեկ Աբրահամյանի եւ Մարտիկ Ղարիբյանի կողմից ձեռնարկված գործողությունների հետեւանքով ձերբակալված Արման Կոստանյանի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը՝ ձերբակալվածների պահման վայրից փախուստը, նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԱԱԾ-Ն՝ 1 ՏՈՆՆԱ ԿՈԿԱՅԻՆԻ ԳՈՐԾՈՎ

ԱԱԾ-ն 1 տոննա Կոկայինի գործով որոշում է կայացրել եւ 2 ամսով երկարաձգել ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի ընկերության պահեստապետ Սամվել Գալստյանի կալանքի ժամկետը:

Հիշեցնենք, որ ընկերության տնօրենն ու պահեստապետը ներկայացրել են այն, ինչը Միհրան Պողոսյանի ցուցադրել է տեսանյութում: Մասնավորապես, ընկերության պահեստապետ Սամվել Գալստյանը հայտնել է, որ բանվորը տարօինակ բան է նկատել արկղերում, ու այդ մասին տեղյակ են պահել իրեն, ինքը 15 րոպե անց մոտեցել է արկղերին եւ տեսել է տարօրինակ զանգվածը: Առանձնացրել է մեկ արկղը ու նկարել է իր բջջային հեռախոսով: Կրկին բացել է նոր արկղ ու նկարել է իր հեռախոսով տարօրինակ զանգվածը: Այդ ամենից հետո հրահանգել է աշխատակիցներին շարունակել աշխատանքը, իսկ տարօրինակ զանգվածի մասին տեղյակ է պահել ղեկավարներին, ու այլ բանից տեղյակ չէ:

Ընկերության տնօրեն Լեւոն Աթաջանյանն էլ ցուցմունք է տվել, որ աշխատակիցները նկատել են տարօրինակ զանգված արկղերում, որի մասին տեղյակ են պահել իրեն, եւ այլ բան չգիտի:

Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ՝ Մ.Պ-ի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում է կայացրել: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, Մ.Պ-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Հավելենք, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով՝ «Մրգենի» ՍՊԸ-ն հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հուլիսի 27-ին: Ընկերության տնօրենը Ռուսաստանի քաղաքացի Լեւոն Աթաջանյանն է:

Նկատենք, որ նույնիսկ վարույթի հանրային մասնակիցների մոտ է խոսակցություն եղել, որ ակնհայտ է՝ պահեստապետը որեւէ առնչություն չունի Կոկաինի հետ: Ստանալուց իրեն այդ մասին տեղեկացրել են բանվորները, որ բանանի արկղերի մեջ այլ պարունակություն կա, ինքն էլ անմիջապես տեղեկացրել է ՍՊ ընկերության ղեկավարությանը, որոնք մի քանի անգամ եկել ուսումնասիրել են:

Համացանցում տեսագրությունը հրապարակվել է, թե ինչպես է պահեստապետը անակնկալի եկած ուսումնասիրում արկղերը, ապա լուսանկարում եւ ուղարկում է տնօրենին, սակայն շարունակում են նրան կալանքի տակ պահել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱԿ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՂԸ ՀԱՄԵՐԿԲԱՑԻՆ ԷՐ

Հուլիսի 24-ին՝ ժամը 01.17-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել է, որ Խանջյան փողոցի ակումբներից մեկում ծեծկռտուք է: Ժամը 02.50-ին հիվանդանոցից է ահազանգ ստացվել. շտապօգնության խումբը բուժօգնության էր տեղափոխել 36-ամյա օտարերկրացի տղամարդու՝ «այտի եւ նախաբազկի կտրած վերք» ախտորոշմամբ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզել են, որ նշված ակումբի մոտ հիվանդանոց տեղափոխվածը բռունցքով հարվածներ է հասցրել 55-ամյա համերկրացուն, որն էլ դանակով հարվածներ է հասցրել նրան:

Հետագա միջոցառումների արդյունքում 55-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել նաեւ 36-ամյա երիտասարդը:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

ԿԻՐԱՌՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2023 թվականի ապրիլի 28-ի եւ հունիսի 26-ի որոշումների հիման վրա՝ Զինվորական կենտրոնական դատախազության զինվորական կայազորների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնում եւ Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող երկու անձի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Դատախազությունից հայտնում են, որ կարգապահական վարույթի ընթացքում պարզվել է, որ դատական գործով դատախազները ոչ պատշաճ են կատարել իրենց ծառայողական պարտականությունները: Մասնավորապես, 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի պահանջների խախտման արդյունքում առաջին անգամ ոչ մեծ հանցանք կատարած մեղադրյալների նկատմամբ ազատազրկման ձեւով պատիժ է նշանակվել: Կարգապահական վարույթի արդյունքները 2023 թվականի հուլիսի 19-ին եւ հուլիսի 20-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով:

Էթիկայի հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 20-ի որոշումներով՝ հաստատված է համարել կարգապահական խախտումների առկայությունը եւ դրանցում Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազության եւ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական կայազորների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի երկու դատախազի մեղավորությունը:

Գլխավոր դատախազի 2023 թվականի հուլիսի 21-ի հրամաններով՝ դատախազների նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՎԻՃԱԿԸ՝ ԿՈՐՊՈՒՍՈՒՄ

2021թ. հուլիսի 8-ին Գրիգորի Խաչատուրովն ազատվեց ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից: Նույն թվականի օգոստոսի 6-ին 3-րդ բանակային կորպուսի հրամանատար նշանակվեց գնդապետ Ալեքսանդր Ցականյանը: Այդ կորպուսի զինծառայողները հայտնեցին, որ շատ սպաներ, պայմանագրային զինծառայողներ, չցանկանալով ծառայել Ալեքսանդր Ցականյանի հրամանատարությամբ, դիմումներ են գրել եւ զորացրվել: 3-րդ բանակային կորպուսի զորամասերում քիչ չեն թափուր պաշտոնները: Խնդիրներ կան նաեւ սահմանագծի դիրքերը պատշաճ կահավորելու գործում: 3-րդ բանակային կորպուսը գլխավոր ռազմական տեսչության կողմից ցածր գնահատականի է արժանացել: 2023թ. հուլիսի 5-ին՝ Սահմանադրության օրվա առթիվ մի շարք հրամանատարներ գեներալի զինվորական կոչումներ են ստացել, սակայն 3-րդ բանակային կորպուսի վատ արդյունքների պատճառով գնդապետ Ցականյանին գեներալի կոչում չեն շնորհել: ՊՆ-ի մեր աղբյուրները հայտնում են, որ դրվել է Ալեքսանդր Ցականյանին 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատելու հարցը, սակայն պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ինչ-ինչ շահագրգռվածությունից դրդված, չի համաձայնել դրան: 3-րդ բանակային կորպուսի մի խումբ սպաների նկատմամբ ներկայումս քրեական գործեր են քննվում:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ «ԴՐԵՍ ԿՈԴԸ»

Տավուշի մարզպետարանը համապատասխան նախարարությունների հետ կառավարում է ընդամենը երկու ոլորտ՝ մարզի բուժհիմնարկները եւ հանրակրթական դպրոցները, իսկ մարզպետարանում պաշտոնավարում են շուրջ 70 պաշտոնյաներ, որոնք, բարձր աշխատավարձից զատ, տարեկան ընդհանուր շուրջ 60 միլիոն դրամ պարգեւավճար են ստանում պետբյուջեից: Նիկոլի Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի կողմից 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը, իբր, սահմանամերձ մարզի բոլոր հիմնախնդիրները լուծեց, անցել է մարզպետարանի աշխատողների «դրես կոդին»: Հ. Ղալումյանը 2023թ. հուլիսի 20-ին ընդունել է թիվ 185-Ա որոշումը՝ «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատանքային ներքին կանոնակարգը հաստատելու եւ ՀՀ Տավուշի մարզպետի 2021 թվականի հունիսի 20-ի «ՀՀ Տավուշի մարզպետի 2021 թվականի հուլիսի 31-ի թիվ 65-Ա» որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Այդ որոշման 5-րդ բաժինը վերնագրված է՝ «Մարզպետի աշխատակազմի աշխատողների հանդերձանքի կանոնները»: Տղամարդկանց համար սահմանվել են հանդերձանքի հետեւյալ կանոնները՝ դասական միագույն վերնաշապիկ՝ առանց հավելյալ նախշերի (թույլատրվում են նույն երանգներով աննշան նախշեր, բաց երանգների մեջ), գործարար ոճի միագույն բաճկոն, կոստյում, ժիլետ՝առանց հավելյալ նախշերի (թույլատրվում են նույն երանգներով աննշան նախշեր), գործարար ոճի տաբատ, գույնը՝ սեւ, մուգ կապույտ, մոխրագույն, շագանակագույն, փողկապ, դասական միագույն կոշիկներ: Կանանց համար եւս սահմանվել են հանդերձանքի կանոներ: Մարզպետարանի աշխատողներին չի թույլատրվում կրել կաշվե եւ սպորտային հագուստ, ջինսե հագուստ,սպորտային կոշիկներ, սանդալներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

Ի՞ՆՉ ՎԻՃԱԿ Է ԱՐՑԱԽՈՒՄ

Շրջափակման հետեւանքով Արցախն այսօր գտնվում է հումանիտար աղետի ոլորտներում. լրագրողների հետ զրույցում հայտարարեց Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը՝ նշելով, որ արձանագրվում են շրջափակման ուղղակի ու անուղղակի հետեւանքով մարդկային մահեր՝ նորածին երեխաներից մինչեւ տարեց քրոնիկ հիվանդներ:

«Սննդի մեծ սղություն կա, քանի որ շրջափակումից առաջ Արցախում օգտագործվող սննդի մոտ 90%-ը ներկրվում էր Հայաստանից: 40 օր է՝ ոչ մի կիլոգրամ սնունդ չի մտել Արցախ, իսկ տեղական սահմանափակ արտադրանքը եւ դրա մատակարարումը մեծապես տուժել են վառելիքի ու այլ անհրաժեշտ նյութերի բացակայությունից.

Վառելիքի ու այլ անհրաժեշտ նյութերի ու պարագաների գրեթե բացակայության պատճառով չեն կատարվել գյուղատնտեսական աշխատանքների 80%-ը, նույնիսկ հացահատիկի բերքահավաքը կազմակերպվել է խիստ մասնակի ծավալով, դադարել են նույնիսկ շրջափակման ընթացքում մասնակիորեն գործող տնտեսական ձեռնարկությունները, գրեթե ամբողջությամբ դադարել է հանրային տրանսպորտը, խիստ դժվարությամբ են աշխատում առողջապահական ու այլ առաջին անհրաժեշտության ծառայությունները.

Առողջապահական համակարգում տարբեր դեղատեսակներ սպառվել են, մնացած մասը հասնում են ծայրահեղ սահմանաչափի՝ռիսկի տակ դնելով մարդկանց կյանքն ու առողջությունը, կրկնապատկվել են չծնված ու նորածին երեխաների մահվան ու բարդություններով ծնվելու դեպքերը, հղիների շրջանում սակավարյունությունը հասել է 90%-ի, դադարել են բոլոր պլանային հետազոտություններն ու վիրահատությունները, հարյուրավոր բուժառուներ չեն կարողանում մեկնել Հայաստան ու արտասահման բուժման նպատակով, էլեկտրամատակարարման ամենօրյա խափանումների ու անհրաժեշտ սպասարկման բացակայության պատճառով շարքից դուրս են գալիս բժշկական կարեւոր սարքավորումները.

Ջեռուցման ու սննդի խնդիրների պատճառով տարբեր ժամանակահատվածներում լրիվությամբ կամ մասնակի փակվել են դպրոցներն ու մանկապարտեզները, հոգեբանական ահաբեկչության ու թերսնման պատճառով մեծապես տուժել է երեխաների ընկալունակությունն ու առաջադիմությունը, հարյուրավոր ուսանողներ չեն կարողանում մեկնել Հայաստան եւ արտասահման կրթության շարունակման նպատակով:

Արդեն 196 օր է, ինչ Ադրբեջանը խափանում է Հայաստանից Արցախ էլեկտրամատակարարումը, ինչի հետեւանքով ամեն օր առնվազն վեց ժամով հովհարային անջատումներ են տեղի ունենում, իսկ տնտեսական բազմաթիվ ձեռնարկություններ դադարել են գործելուց: Իսկ գազամատակարարումը ամբողջությամբ դադարեցված է արդեն 158 օր շարունակ՝ հանգեցնելով բազմաթիվ սոցիալ-տնտեսական հետեւանքների.

Մասնավոր հատվածում փակվել են բոլոր արտադրամասերը, գրեթե ամբողջությամբ փակվել են բոլոր ծառայություններ մատուցող ընկերությունները, մասնավոր հատվածում աշխատողների ավելի քան 80%-ը դարձել է գործազուրկ, որը ավելի քան 15,000 մարդ է, դադարել են 3,700 բնակարանների կառուցման աշխատանքները, որոնք նախատեսված էին 2020թ. պատերազմի հետեւանքով տեղահանված ընտանիքների համար, տնտեսության ուղիղ վնասը կազմել է շուրջ 430 միլիոն դոլար, որը նախատեսված տարեկան ՀՆԱ-ի շուրջ 50%-ն է»,- մանրամասնեց Արցախի նախագահը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Վարչապետի խորհրդական Հրաչյա Սարգսյանն իր պաշտոնին նշանակվել է 2023 թվականի ապրիլի 4-ին: Մինչ վարչապետի աշխատակազմ տեղափոխվելը Սարգսյանը Երեւանի քաղաքապետն էր: Հայտարարագիր ներկայացրել է վարչապետի աշխատակազմ տեղափոխվելուց մեկ ամիս անց, սակայն հայտարարագիրը ներկայացված է՝ ըստ փոխքաղաքապետ եղած ժամանակահատվածի:

Սարգսյանը քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո կայացված ավագանու արտահերթ ընտրություններից հետո: Հիշեցնենք, որ նախկինում բանկային համակարգում աշխատող Սարգսյանը 2023 թվականի ապրիլի 17-ին հրաժարական ներկայացրեց քաղաքապետի պաշտոնից. նա ընտրվել էր Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանի պաշտոնանկումից անմիջապես հետո՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին: Այդ ժամանակահատվածում ներկայացված հայտարարագրում, երբ Սարգսյանը քաղաքապետ էր, հայտարարագրել է 10 մլն 777 հազար դրամ տարեկան եկամուտ: Այժմ, երբ նա վարչապետի խորհրդական է եւ ներկայացրել է քաղաքապետ եղած ժամանակահատվածի հայտարարագիր, նրա եկամուտներն ավելացել են՝ դառնալով 16 մլն 168 հազար դրամ:

Այսպիսով, վարչապետի խորհրդականը, ըստ հայտարարագրի, 2017 թվականին ձեռք է բերել բնակարան Երեւանի Աջափնյակ վարչական շրջանում, որը ձեռք է բերել հիփոթեքով: Ըստ այդմ, Սարգսյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 19 մլն 606 հազար դրամ, որից 11 մլն 942 հազար դրամը հիփոթեքի գումարի մնացորդն է:

Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 6 մլն 240 հազար դրամ, իսկ հաշվետու տարվա ավելացված եկամուտներից 2 մլն 681 հազար դրամը Երեւանի քաղաքապետի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկից է՝ որպես աշխատանքի վարձատրություն:

Քաղաքական գործիչներից շատերը հայտարարագրում ոչ մի ծախս չեն նշում. ՔՊ-ական թիմը, որը խոսում էր թափանցիկությունից, այժմ ավելի գաղտնի է պահում իրենց վերաբերող տվյալները, քան նախկինում էր: Նրանք հայտարարագրում են ծախսեր միայն վարկերի մարման վերաբերյալ, ինչպես արել է Սարգսյանը: Նրա՝ վարկի մարմանն ուղղված վճարումները կազմել են 4 մլն 121 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հուլիսի 25-ի հերթական նիստում հաստատեց Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններին միջազգային դիտորդներ հրավիրելու որոշումը:

ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը նախագիծը զեկուցելիս մանրամասնեց՝ Երեւանի ավագանու առաջիկա ընտրություններին միջազգային դիտորդներ հրավիրելու համար հարկավոր է որոշում ընդունել: Այսպիսով, նախագծի համաձայն, դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով ԿԸՀ-ն հրավիրում է Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսին: ԿԸՀ նախագահը չբացառեց, որ առաջիկայում եւս մեկ միջազգային կազմակերպություն հրավիրվի դիտորդական առաքելություն իրականացնելու:

Հանձնաժողովը փոփոխություն կատարեց «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N 209-ն» որոշման մեջ, որը սահմանում է ԱԺ եւ համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների ժամանակ կուսակցությունների գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու ընթացակարգը:

Նախագիծը ներկայացնող ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը հայտնեց, որ այս փոփոխությունը հնարավորություն կտա կուսակցություններին ներբեռնել ձեւաթուղթը, որով ներկայացնում են գույքի եւ եկամուտների հայտարարագիր, եւ վերջիններս իրենց տվյալները լրացնելուց հետո կկարողանան վերբեռնել ֆայլերը ԿԸՀ կայքում: Եւ այլեւս կարիք չի լինի այդ հաշվետվությունը գրավոր եղանակով ներկայացնել ԿԸՀ:

ԿԸՀ նախագահը հավելեց՝ առաջիկայում Երեւանի ավագանու ընտրություններով հետաքրքրված կուսակցությունները կհրավիրվեն հանձնաժողով, որպեսզի ներդրված էլեկտրոնային նոր համակարգերը մանրամասն ներկայացվեն իրենց:

Փոփոխություն կատարվեց նաեւ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի N 23-ն» որոշման մեջ: Այս որոշումն էլ վերաբերում է թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացնելուն: Կուսակցությունները վերոնշյալ էլեկտրոնային համակարգերի միջոցով հնարավորություն կստանան վերբեռնել թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագրերը եւ ազատվել այդ հաշվետվությունն էլեկտրոնային կրիչի միջոցով ԿԸՀ ներկայացնելու պարտավորությունից:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՎԵՑԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՊԼԱՆՆԵՐԸ

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:



Սահմանվել է, որ վերոնշյալ դպրոցներում ուսումնական տարին մեկնարկում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված ժամկետներին համապատասխան: Նույնը վերաբերում է նաեւ աշնանային, ձմեռային եւ գարնանային արձակուրդներին:

Համաձայն օրինակելի պլանների՝ ուսումնական տարվա տեւողությունը 34-40 շաբաթ է: Մասնագիտական առանձնահատկություններով եւ շենքային պայմաններով պայմանավորված՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ: Առարկաների եւ դասաժամերի քանակն ուսումնական պլանում կարող է ընդլայնվել՝ կախված դպրոցի ֆինանսական հնարավորություններից:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձեւերն են անհատական եւ խմբային պարապմունքները: Անհատական դասի տեւողությունը՝ 45, խմբայինը 40 րոպե է:

Դպրոցի սովորողների գիտելիքների գնահատումը կատարվում է ուսումնական պլանով նախատեսված առարկաների մասով կազմակերպվող տարբերակված ստուգարքներով եւ քննություններով: Քննությունը գնահատվում է գնահատման 10 միավորային համակարգով: Դպրոցի եւ սովորողի ծնողի փոխադարձ համաձայնությամբ սովորողի անհատական պարապմունքների՝ անընդմեջ մինչեւ 16 դասաժամ հարգելի բացակայության դասաժամերը կարող են համալրվել՝ դպրոցի առաջարկած ժամանակացույցի համաձայն:

Դրսեկության ձեւով (էքստեռն) դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ փոխադրումը կազմակերպվում է ուսումնական պլանով նախատեսված ստուգարքների եւ քննությունների հանձնման, սովորողի գերազանց առաջադիմության, դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման եւ լիազոր մարմնի թույլտվության դեպքում: Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում սովորողը դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

Դպրոցի ավարտական վկայականը տրվում է ավարտական ստուգարքներն ու քննությունները հանձնած եւ ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասաժամերի առնվազն 70% հաճախում ունեցած սովորողներին: Դպրոցում վճարովի հիմունքներով կարող է կազմակերպվել նախադպրոցական, հետդպրոցական, ինչպես նաեւ ընդհանուր գեղագիտական զարգացման գծով ուսումնառություն:

Տեսական առարկաների (սոլֆեջո, երաժշտական գրականություն, արվեստի պատմություն, երաժշտական գրագիտություն եւ ունկնդրում) խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում փոքր համակազմ ունեցող դպրոցում այն կարող է սկսել 3 սովորողից: Լիազոր մարմնի որոշմամբ՝ դպրոցում ուսուցումը կարող է կազմակերպվել հեռավար եղանակով:

ԲԱՆԿԵՐ

ՄԱՄՆԱՃՅՈՒՂ Է ՓԱԿՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը վերջին օրերին ահազանգեր է ստանում Վարդենիսից, որ «Հայբիզնեսբանկի» Վարդենիսի մասնաճյուղը փակվելու է եւ տեղափոխվելու է Մարտունի, ինչն առաջացրել է տվյալ մասնաճյուղի հաճախորդների զայրույթն ու բողոքը:

Մեզ ահազանգած քաղաքացիները մասնավորապես անհանգստություններ էին հայտնում, որ վարկեր ու գրավադրված ոսկիներ ունեն այդ մասնաճյուղում ու հիմա չգիտեն՝ ճակատագիրն ինչ է լինելու, ինչպես պետք է վճարումներ կատարեն:

Վարդենիսի մասնաճյուղի փակումը մի շարք անհարմարություններ է պատճառելու տեղացիներին. ստացվում է՝ բանկի ծառայություններից օգտվելու համար պետք է Վարդենիսից ամեն օր հասնեն Մարտունի: Մեզ նաեւ պատմեցին, որ բանկի աշխատակիցներին ստիպում են ազատման դիմում գրել. ստացվում է՝ մասնաճյուղի փակումը նաեւ գործազրկության խնդիր է առաջացնելու:

«Ժողովուրդ» օրաթերթը խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար դիմեց «Հայբիզնեսբանկի» կենտրոնական մասնաճյուղ, որտեղից ասացին, որ հեռախոսով չեն կարող մեկնաբանություն տալ, պետք է գրավոր հարցում ուղարկենք: Բանկի պարզաբանումը ստանալուն պես կհրապարակենք այն:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԻՆ

Հուլիսի 1-ից քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում ընտանեկան, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում է բացառապես անկանխիկ եղանակով:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից հայտնում են, որ բացառություն կկազմեն 75 տարին լրացած, ինչպես նաեւ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն (ֆունկցիոնալության խորը եւ ծանր աստիճանի սահմանափակում) ունեցող անձինք, որոնք, իրենց ցանկությամբ, նպաստը կարող են շարունակել ստանալ կանխիկ եղանակով՝ Հայփոստի միջոցով:

Հետեւաբար եթե նպաստը ստանում էիք Հայփոստի որեւէ սպասարկման կենտրոնից եւ մինչեւ հունիսի 30-ը չեք ընտրել որեւէ բանկ, ապա համակարգն ինքնաշխատ եղանակով (պատահականության սկզբունքով) Ձեր փոխարեն արդեն իսկ կատարել է բանկի ընտրություն: Այս դեպքում կարող եք զանգահարել Ջանգերի կենտրոն 114 հեռախոսահամարով կամ մոտենալ Միասնական սոցիալական ծառայության ձեր բնակավայրի սպասարկման տարածքային կենտրոն եւ տեղեկանալ, թե որ բանկն է ձեզ սպասարկում:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաեւ, որ ցանկացած պահի կարող եք դիմել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն նպաստը վճարող բանկը փոխելու համար:

Եթե ցանկանում եք օգտվել անկանխիկ գործարքների դեպքում 10% հետվճարի ծրագրից, ապա կարող եք ընտրել հետեւյալ բանկերից որեւէ մեկը՝ «ՎՏԲ Հայաստան» բանկ, «Արդշինբանկ», «Հայբիզնեսբանկ» եւ «Ակբա» բանկ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍՊՈՐՏԻ ԵՏՆԱԲԵՄԻՑ»

ՎԱԶԳԵՆ ԹԵՎԱՆՅԱՆԸ՝ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը «Սպորտի ետնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում այս անգամ զրուցել է 2023 թվականի ազատ ոճի ըմբշամարտի մինչեւ 23 տարեկաններեի Աշխարհի եւ Եվրոպայի մեծահասակների չեմպիոն Վազգեն Թեւանյանի հետ: Մարզիկը մեզ հետ զրույցում պատմել է տպավորիչ գոտեմարտերի, առանձնացող հաղթանակների, պայքարի մղող պարտություններեի, հայկական ըմբշամարտի տեսլականի մասին:

-Գիտեմ, որ հետաքրքիր կերպով են ընտրել Ձեր անունը: Կխնդրեմ՝ մեր հետեւորդների համար պատմեք՝ ինչպես է ստացվել, որ Ձեզ հենց Վազգեն են անվանակոչել:

-Իմ անունը հայրս ու հորեղբայրս են ընտրել: Ծնվել եմ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, եւ հենց այդ օրվա դեպքերի, իրադարձությունների հետ կապված՝ ինձ անվանակոչել են Վազգեն՝ ի պատիվ Վազգեն Սարգսյանի:

-Սպարապետի ուժը զգո՞ւմ եք Ձեզ վրա:

-Որպես մարզիկ՝ դա մի հարց է, որպես հայ՝ այլ: Կարծում եմ՝ մեր բոլոր ազգային հերոսների, սպարապետների ուժը ցանկացած հայ իր վրա պետք է զգա, որովհետեւ մենք իրենց հետնորդներն ենք եւ պետք է անպայման իմանանք՝ ինչքան ուժեղ ու հզոր սպարապետներ ենք ունեցել:

-Դուք 1994 թվականի Եվրոպայի չեմպիոն, 1995 թվականի աշխարհի բրոնզե մեդալակիր, 1996 թվականի օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, ինչպես նաեւ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Արմեն Մկրտչյանի հորաքրոջ թոռն եք: Արդյոք նա ինչ-որ կապ ունեցե՞լ է Ձեր՝ սպորտում հայտնվելու հետ:

-Ճիշտն ասած, ո՛չ, այդքան էլ կապված չէ նրա հետ բարեկամական հարաբերություններ ունենալու հետ: Սակայն մորեղբայրս, երբ իմացել է՝ ես գնում եմ սպորտի, միշտ աջակցել է, կողքիս է եղել, խորհուրդներով օգնել է: Իմ հաջողություններով միշտ ուրախացել է, ու կապի մեջ ենք եղել անընդհատ:

-Իսկ ինչպե՞ս է Վազգեն Թեւանյանը մուտք գործել սպորտ:

-Սպորտով մանկուց եմ զբաղվել: Ոչ թե կոնկրետ մարզաձեւով, այլ ընդհանուր: Իսկ կոնկրետ ըմբշամարտով սկսել եմ զբաղվել ընկերերիս խորհրդով: Տարիքով ավելի մեծ ընկերներ ունեի, որոնք ավելի վաղ ժամանակից զբաղվում էին ըմբշամարտով, եւ իրենց խորհրդով սկսեցի զբաղվել:

-Իսկ հենց սկզբից ազա՞տ ոճի ըմբշամարտով եք զբաղվել, թե՞ հունահռոմեական:

-Միանգամից ազատ ոճով:

-Ո՞րն է տարբերությունը հունահռոմեականի եւ ազատ ոճի ըմբշամարտի միջեւ, եւ, ըստ Ձեզ, ո՞րն է ավելի դժվար:

-Հունահռոմեական ըմբշամարտը միայն գոտկատեղից վերեւ է, իսկ ազատը՝ հնարավորություն ունես հնարքներ կիրառելու նաեւ ոտքերից: Իմ կարծիքով՝ երկուսն էլ դժվար է յուրովի. մեզ դժվար է ամեն տեղից պաշտպանվելը, ամեն տեղից հնարքներ սպասելը: Հունահռոմեականներին էլ դժվար է ոտքերին չդիպչելը:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՄԻԱՎՈՐՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

«Այս օրհասական ժամանակներում մեր ժողովուրդը պետք է միասնական մի բռունցք դառնա»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ռոբերտ Ամիրխանյանը՝ անդրադառնալով Արցախում առկա ծանր իրավիճակին:

«Մենք պետք է մոռանանք մեր անձնական շահերը եւ միավորվենք Արցախը փրկելու շուրջ: Այսօր հայ ժողովուրդը կանգնած է պատմական ծանր օրերի առաջ, եւ այս վիճակից մեզ միայն կհանի, երբ բոլորս կհամախմբվենք. մեզ պակասում է միավորումը: Ես կոչ եմ անում մեր ժողովրդին մի բռունցք դառնալ, համախմբվել եւ փրկել երկիրը կործանումից»,- ընդգծեց մեր զրուցակիցը:

Հիշեցնենք, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը Արցախը հայտարարել է աղետի գոտի: Հուլիսի 25-ին՝ ժամը 20:00-ին, տեղի ունեցան համաժամանակյա հանրահավաքներ Ստեփանակերտի Վերածննդի եւ Երեւանի Ազատության հրապարակներում՝ հանուն Արցախի ապաշրջափակման եւ հումանիտար աղետի վերացման, հանուն արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգման եւ դրանից ցանկացած հետնահանջի դատապարտման:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱԽՄԲՎԵԼ Է ՊԵՏՔ

Երեկ՝ ժամը 20:00-ին, տեղի ունեցան համաժամանակյա հանրահավաքներ Ստեփանակերտի Վերածննդի եւ Երեւանի Ազատության հրապարակներում՝ հանուն Արցախի ապաշրջափակման եւ հումանիտար աղետի վերացման: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ռաֆայել Երանոսյանի հետ Արցախի շրջափակման եւ հանրահավաքի մասին:

-Արցախն արդեն 7 ամիս է՝ շրջափակման մեջ է: Կասե՞ք՝ ինչ եք զգում:

-Ես այսքան վատ եւ անելանելի վիճակում ինձ չեմ զգացել: Երեխաները սոված են, մարդիկ անելանելի վիճակում են: Ոչ տրամադրություն կա, ոչ սիրտ կա: Ես, լինելով ստեղծագործ մարդ, ոչ մի բանի հավես չունեմ:

-Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս պետք է լուծվի այս հարցը:

-Չգիտեմ: Ուղղակի պետք է համախմբվել, որ այս վիճակից դուրս գանք:

-Մասնակցելո՞ւ եք այսօրվա հանրահավաքին:

-Այսօրվա հանրահավաքին դժվար թե մասնակցեմ, որովհետեւ այդ ժամին ներկայացում ունեմ:

Հիշեցնենք, որ երեկ դերասան, հումորիստ, շոումեն Ռաֆայել Երանոսյանի ծննդյան օրն էր: Նա տոնում էր 42-ամյակը:

Զրուցեց ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՈՏ Է ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Ռուսաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Արսեն Զախարյանը մոտ է իտալական «Լացիո» տեղափոխվելուն: Այս մասին գրում են ռուսական ԶԼՄ-ները: Իտալական «Լացիո»-ն պաշտոնական առաջարկով դիմել է Մոսկվայի «Դինամո»-ին: Հռոմեական թիմը պատրաստ է Զախարյանի համար վճարել 10 միլիոն եվրո, հետագայում՝ բոնուսային եւս 4 միլիոն եվրո: Արսեն Զախարյանի ներկայիս պայմանագիրը Մոսկվայի «Դինամո»-ի հետ նախատեսված է մինչեւ 2024 թվականը: 2021 թվականին Զախարյանը նորամուտն է նշել Ռուսաստանի ֆուտբոլի ազգային թիմի կազմում եւ մինչ օրս անցկացրել է 4 հանդիպում:

ՀԱՄԱԼԲՈՒՄ՝ «ԻՆՏԵՐ»-ՈՒՄ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերը» ցանկանում է ձեռք բերել աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ «Աստոն Վիլայի» դարպասապահ Էմիլիանո Մարտինեսին եւ առաջին առաջարկն է արել անգլիական ակումբին. հաղորդում է TyC Sports-ը:

«Ինտերը» պատրաստ է 30-ամյա դարպասապահի համար վճարել 15 միլիոն եվրո, «Աստոն Վիլան» պահանջում է 25 միլիոն եվրո: Բանակցությունները շարունակվում են:

Էմիլիանո Մարտինեսի պայմանագիրը «Աստոն Վիլայի» հետ նախատեսված է մինչեւ 2027թ. հունիս:

«Ինտերը» փոխարինող է փնտրում կամերունցի Անդրե Օնանային, որը տեղափոխվել է անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ»:

ՄԲԱՊԵՆ ՀՐԱԺԱՐՎԵՑ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ֆրանսիայի հավաքականի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեն հրաժարվել է Սաուդյան Արաբիայի «Ալ Հիլալի» առաջարկից, որով կարող էր մեկ տարում ստանալ 700 միլիոն եվրո. հաղորդում է Relevo-ն:

«Ալ Հիլալը» փարիզյան ակումբին Մբապեի տրանսֆերի համար առաջարկել էր 300 միլիոն եվրո: ՊՍԺ-ն ընդունել էր առաջարկը եւ թույլատրել էր «Ալ Հիլալին» բանակցել Մբապեի հետ:

Ֆուտբոլիստը ցանկանում է եւս մեկ մրցաշրջան անցկացնել ՊՍԺ-ում եւ հաջորդ ամռանն անվճար տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»:

ՊՍԺ-ն պահանջում է պայմանագիրը երկարաձգել մինչեւ 2025թ. հունիս, քանի որ ունեցել են այդ մասին բանավոր պայմանավորվածություն:

● *Հուլիսի 27-ին «Մեggn» ակումբում տեղի կունենա Aida Arami-ի համերգը: Տոմսերի արժեքը՝ 4000-7000 դրամ: Սկիզբը՝ ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՐՑ. Ավագանին կարո՞ղ է բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները եւ ո՞ր դեպքում:
Հովհաննես Սաղաթելյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:

ՀՀ ՏԿԵ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որեւէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված:

Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անել պատվաստումից առաջ:
Լիլիթ Սիմիդյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստումից առաջ բժիշկը պետք է գնահատի երեխայի առողջական վիճակը: Գնահատման արդյունքում, եթե երեխան առողջ է, կատարվում է պատվաստում, իսկ եթե հայտնաբերվում է որեւէ ախտաբանական երեւույթ, ապա պատվաստումը հետաձգվում է մինչեւ երեխայի առողջանալը:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատվաստումից առաջ չի կարելի երեխային տալ ջերմիջեցնող եւ հակաալերգիկ դեղորայք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Օրեր առաջ Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ ուժեղ քամուց Մարալիկ քաղաքի Կոմսոմոլ փողոցում ծառը կոտրվել եւ ընկել է գազատար խողովակի վրա. առկա է գազի արտահոսք: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Կոմսոմոլ փողոցում ծառի ճյուղը ընկել է տներից մեկի բակում գտնվող գազատար խողովակի վրա եւ վնասել այն: Փրկարարները սահմանազատել են տարածքը եւ հեռացրել ծառի կոտրված ճյուղերը:

Դեպքի վայրում գտնվող գազի վթարային ծառայության աշխատակիցները դադարեցրել են գազի արտահոսքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10+15 +19+24
Կոտայքի լեռներ	+10+14 +19+22
Կոտայքի նախալեռներ	+16+18 +26+28
Գեղարքունիք	+11+15 +18+22
Լոռի	+10+14 +18+22
Տավուշ	+14+19 +22+26
Արագածոտնի լեռներ	+8+11 +18+21
Արագածոտնի նախալեռներ	+17+20 +25+29

Արարատ	+19+22 +30+32
Արմավիր	+12+14 +30+32
Վայոց ձորի լեռներ	+18+20 +20+22
Վայոց ձորի նախալեռներ	+19+22 +30+32
Սյունիքի հովիտներ	+18+22 +29+33
Սյունիքի նախալեռներ	+11+14 +20+24
ԼՂՀ	+17+22 +26+31
Երեւան	+18+20 +29+31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*